ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Արևաշող	Ավագանու հերթական նիստ	15.04.2020թ.	11:00	Արևաշողի համայնքապետարանի ավագանու սենյակ (գ.Արևաշող, 1 Փ. 105)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ:0255-2-21-76 էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 Ապրիլի 2020 թվականի N 13

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15 - Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 - րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15 - ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15 - ի նիստի

1. **Լոռու մարզի Արեվաշող համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին**
2. **Արևաշող համայնքի վարչական տարածքում գտնվող, Արևաշող համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին:**
3. **Արևաշող համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին:**

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2020 թվականի N 14

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35 - րդ հոդվածի 1 - ին կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն Լոռու մարզի Արևաշող համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2020 թվականի N 15

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի 9-րդ կետի 4-րդ ենթակետի 2-րդ պարբերությամբ, ՀՀ Լոռու մարզի Արևաշող գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-021-0112-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0224 հա մակերեսով արոտավայրերը, 0,1473 հա և 0,0998 հա մակերեսներով վարելահողերը արդյունաներության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի փոփոխադրելու առաջարկությանը:

2.Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2020 թվականի N 16-Ա

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 - րդ հոդվածի 5 – րդ մասին 12 – րդ կետով և «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 - րդ հոդված 1 –ին կետոով՝

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ստեղծել Արևաշող համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝
    1. Սևադա Սահակյան համայնքի աշխատակազմի քարտուղար, խորհրդի նախագահ,
    2. Անահիտ Ավետյան աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար
    3. Հրայր Հարությունի Համբարյան - ավագանու անդամ, խորհրդի անդամ
    4. Հայկ Հարությունի Պետրոսյան - համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ
    5. Էդվինա Վարուժանի Խաչատրյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
    6. Ալիկ Նիկալի Ոսկանյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
    7. Անահիտ Միերի Ադամյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
    8. Ալիկ Լևոնի Խաչատրյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
    9. Անդրանիկ Իշխանի Թադևոսյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ. Նոյեմբերի 25 – ի «Արևաշող համայնքի ղեկավարին կից, Արևաշող համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 24 – Ն որոշմամբ սահմանված կարգով:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 8 – ի «Արևաշող համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին» № 33 – Ա որոշումը:

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ